ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.09.2020թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված բողոքը և հաշվի առնելով բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությունը և հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փորձաքննություն նշանակելու վերաբերյալ 26.08.2020թ. միջանկյալ որոշումը՝

ՊԱՐԶԵՑԻ

Բողոքի օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից ելնելով և հաշվի առնելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետը՝ 26.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից որոշում է կայացվել

փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, որի կատարումը հանձնարարվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

03.09.2020թ. դրությամբ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից փորձագիտական եզրակացություն դեռևս չի տրվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն...:</u>***

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից <u>ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում</u>***: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով ***<u>նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով:</u>*** Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի (հետայսու նաև՝ Կարգ) ***<u>բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն</u>*** կամ դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ընթացքում կայացվող որոշումները բաղկացած են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Որոշումները ստորագրվում և կնքվում են այն կայացրած Անձի կողմից: ***<u>Անձի կողմից բողոքի քննության ընթացքում կայացված որոշումները պետք է լինեն օրինական, հիմնավորված և պատճառաբանված:</u>***

Այսպիսով՝ թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող պետական մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և պետական մարմնի գործունեությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն ***միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ***: ***Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը կայանում է նրանում, որ ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, և այն իրավահարաբերություններում որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացակայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները:***

Պետական գնումների մասին համաձայնագրի, ուժի մեջ է մտել 15.09.2011թ., 20-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ բողոքարկման ընթացակարգերը պետք է ապահովեն հետևյալը.

ա) հրատապ միջանկյալ միջոցառումներ՝ Համաձայնագրի խախտումներն ուղղելու և առևտրային հնարավորությունները պահպանելու համար: Նման գործողությունը կարող է հանգեցնել գնումների գործընթացի կասեցման: Այդուհանդերձ, ընթացակարգերը կարող են նախատեսել, որ խնդրո առարկա շահերի, այդ թվում՝ հանրային շահի վրա կարևորագույն բացասական հետևանքները հաշվի առնվեն՝ որոշելու համար, թե արդյոք նման միջոցառումներ պետք է կիրառել, թե ոչ: Այդ դեպքում, միջոցներ չձեռնարկելը պետք է հիմնավորվի գրավոր,

բ) բողոքի հիմնավորվածության գնահատում և դրա վերաբերյալ որոշման հնարավորություն,

գ) Համաձայնագրի խախտման ուղղում կամ կրած կորուստների կամ վնասների փոխհատուցում, որոնք կարող են սահմանափակվել մրցառքի նախապատրաստման կամ բողոքի վրա կատարված ծախսերով:

Համաձայն 05.06.2015թ. ուժի մեջ մտած Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի 18-րդ հոդվածի 6-րդ մասի՝

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ դատարան չհանդիսացող քննող մարմինը կայացնի իր որոշումը, որը ենթակա է դատական քննության կամ կիրառի այնպիսի ընթացակարգեր, որոնք նախատեսում են, որ.

ա. պատվիրատուն պետք է գրավոր պատասխանի հայցին և քննող մարմնին տրամադրի բոլոր համապատասխան փաստաթղթերը,

բ. վարույթի մասնակիցները (այսուհետ՝ մասնակիցներ) պետք է իրավունք ունենան արտահայտվելու նախքան քննող մարմնի կողմից հայցի վերաբերյալ որոշում կայացնելը,

գ. մասնակիցները պետք է իրավունք ունենան ներկայացվելու և ուղեկցվելու,

դ. ամբողջ վարույթը պետք է հասանելի լինի մասնակիցների համար,

ե. մասնակիցները պետք է իրավունք ունենան դիմելու, որպեսզի վարույթը տեղի ունենա հրապարակայնորեն, և, որ վկաները կարողանան ներկայանալ, և

զ. քննող մարմինը պետք է իր որոշումները կամ առաջարկները ընդունի ժամանակին, գրավոր և պետք է ներառի յուրաքանչյուր որոշման կամ առաջարկի ընդունման հիմքերի բացատրությունը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:</u>***

Այսպիսով՝ ելնելով վերոգրյալից՝ կարևորելով անձի իրավունքների գերակայությունը, ապահովելով վերոնշյալ Համաձայնագրերով երաշխավորված բողոքարկման իրավունքի իրացումը և հաշվի առնելով բողոքի օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում արդարացի որոշում կայացնելու համար փորձագետի եզրակացության անհրաժեշտությունը՝

ՈՐՈՇԵՑԻ

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիման վրա 04.08.2020թ. վարույթ ընդունված բողոքը կասեցնել մինչև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից համապատասխան փորձագիտական եզրակացության տրամադրելը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**